

13. Մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասներ*

2003թ. տարեվերջի դրությամբ ՀՀ ոստիկանության կողմից հաշվառվել է 79 մուրացիկ և թափառաշրջիկ անչափահաս, նրանցից 26-ը՝ աղջիկ:

Մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասների սեռատարիքային բաշխվածությունն ըստ մարզերի, 2003թ.

(մարդ)

	Մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասների թվաքանակը		այդ թվում՝ ըստ տարիքի		
	ընդամենը	նրանցից՝ աղջիկներ	մինչև 14 տարեկան	14-15 տարեկան	16-18 տարեկան
ք.Երևան	20	4	3	11	6
Արագածոտն	-	-	-	-	-
Արարատ	18	8	7	5	6
Արմավիր	2	-	1	1	-
Գեղարքունիք	5	2	2	1	2
Լոռի	13	7	4	6	3
Կոտայք	1	1	1	-	-
Շիրակ	15	4	10	4	1
Սյունիք	2	-	-	2	-
Վայոց ձոր	-	-	-	-	-
Տավուշ	3	-	1	2	-
Ընդամենը ՀՀ	79	26	29	32	18


Մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասների թվաքանակի բաշխվածությունն ըստ մարզերի, 2003թ.

(%)

	Բաշխումն ըստ սեռի		Ընդամենի նկատմամբ	
	աղջիկ	տղա	աղջիկ	տղա
ք.Երևան	20.0	80.0	15.4	30.1
Արագածոտն	-	-	-	-
Արարատ	44.4	55.6	30.8	18.9
Արմավիր	-	100.0	-	3.8
Գեղարքունիք	40.0	60.0	7.7	5.7
Լոռի	53.8	46.2	26.9	11.3
Կոտայք	100.0	-	3.8	-
Շիրակ	26.7	73.3	15.4	20.7
Սյունիք	-	100.0	-	3.8
Վայոց ձոր	-	-	-	-
Տավուշ	-	100.0	-	5.7
Ընդամենը ՀՀ	32.9	67.1	100	100

* Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը:

Մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասների թվաքանակը, 1997-2003թթ., մարդ



Հաշվառված մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասների հետ իրականացվում են անհատական նախազգուշական (պրոֆիլակտիկ) աշխատանքներ, պաշտոնապես զգուշացվում են վերջիններիս ծնողները: Անչափահասները ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ստորաբաժանումներում վերցվում են պրոֆիլակտիկ հաշվառման: Նրանց նկատմամբ հետագա վերաբերմունքը ճշտելու նպատակով այդ երեխաներին ուղարկում են Հայ օգնության ֆոնդի Հայաստանյան գրասենյակի «Երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոն», որտեղ համապատասխան ուսումնասիրություններից հետո հանձնում են ծնողներին կամ ուղարկում են համապատասխան ուսումնական հաստատություններ, այդ թվում ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր և Երևանի թիվ 18 հատուկ դպրոց:

Կատարված աշխատանքների արդյունքում վերջին տարիներին էապես նվազել է մուրացկանությանը և թափառաշրջիկությանը զբաղվող անչափահասների թվաքանակը:

ՀՀ ոստիկանության կողմից անչափահասների շրջանում մուրացկանության և թափառաշրջիկության կանխման ուղղությամբ իրականացվող աշխատանքներում հատուկ ուշադրություն է դարձվում նաև անչափահասներին մուրացկանության մեջ ներգրավող չափահաս անձանց հայտնաբերման և օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվության ենթարկելու աշխատանքներին: Այս ուղղությամբ ՀՀ ոստիկանության կողմից կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց են տվել, որ անչափահասները մուրացկանության և թափառաշրջիկության մեջ ներգրավվում են հիմնականում իրենց իսկ ծնողների կամ նրանց փոխարինող այլ անձանց (ընտանիքի չափահաս անդամների և մերձավոր ազգականների) կողմից, որը դժվարություններ է առաջացնում երևույթի կարգավորման հարցում: Այսպես, 2003թ. հայտնաբերվել և անչափահասներին մուրացկանության մեջ ներգրավելու համար օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվության է ենթարկվել 7 չափահաս մարդ, բոլորն էլ՝ գործազուրկ ծնողներ: